ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2023 թվականի N 426 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 718-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 718-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հավելվածի N 1.17 ստուգաթերթի հարցաշարի՝

ա. աղյուսակի 68-րդ կետի «Հղում նորմատիվ ակտին» սյունակում «11» թիվը փոխարինել «111-րդ» բառով,

բ. աղյուսակը 76-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 77-րդ կետով՝

«

77.	Բժշկական զննության ենթակա անձնակազմը ենթարկվում է նախնական և պարբերական բժշկական զննության՝ Նշում 9*	Կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշում						
1)	առկա է սանիտարական գրքույկը՝ պահանջվող ձևով.					3.0	Փաստաթղթային	
2)	պահպանվում է բժշկական զննության հետազոտությունների ծավալը.					3.0	Փաստաթղթային	
3)	պահպանվում է բժշկական զննության հետազոտությունների պարբերականությունը:					3.0	Փաստաթղթային	

».

2) հավելվածի N 1.17 ստուգաթերթի «Ծանոթություններ» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ «Նշում 9*» կետով՝

«Նշում 9*

Ց Ա Ն Կ
ՊԱՐՏԱԴԻՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՋՆՆՈՒԹՅԱՆ

NN ը/կ	Կազմակերպություններ և մասնագիտություններ	Թերապևտի ընտանեկան բժշկի զննում	Հետազոտություններ տուբերկուլոզի նկատմամբ	Մաշկավեներաբանի զննում	Հետազոտություն սիֆիլիսի նկատմամբ	Հետազոտություն աղիքային վարակիչ հիվանդությունների նկատմամբ (մանրէակրություն)	Հետազոտություններ հելմինթակրության նկատմամբ	Հետազոտություն վիրուսային հեպատիտ Բ-ի նկատմամբ	Հետազոտություն վիրուսային հեպատիտ Ց-ի նկատմամբ	Հետազոտություն քիթ-ըմպանի ախտածին ստաֆիլակոկի նկատմամբ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
3.	Մանկաբարձագինեկոլոգիական, 18 տարեկանից ցածր անձանց բժշկական օգնություն և սպասարկում, ստոմատոլոգիական, վիրաբուժական, մաշկավեներաբանական, բժշկական օգնություն և սպասարկում (արտահիվանդանոցային և հիվանդանոցային) իրականացնող, հոգեբուժական կազմակերպություններ, շտապ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների, ինֆեկցիոն, այդ թվում՝ հակատուբերկուլոզային հիվանդանոցների (բաժանմունքների, կաբինետների), վերակենդանացման, հեմոդիալիզի բաժանմունքների, ախտորոշիչ լաբորատորիաների, մանրէազերծման բաժանմունքների, արյան հավաքագրման և փոխնեարկման կետերի կամ բաժանմունքների, միջամտություններ իրականացնող կաբինետների բուժաշխատողներ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ՝ միայն միջամտություններ իրականացնող կամ արյան և դրա բաղադրիչների հետ առնչվող բուժաշխատողները	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ՝ միայն միջամտություններ իրականացնող կամ արյան և դրա բաղադրիչների հետ առնչվող բուժաշխատողները	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ՝ միայն միջամտություններ իրականացնող կամ արյան և դրա բաղադրիչների հետ առնչվող բուժաշխատողները	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ

».

3) հավելվածի N 1.17 ստուգաթերթի «Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ կետով՝

«2. Կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշում:».

4) հավելվածի N 1.19 ստուգաթերթի «Ծանոթություններ» գլխի «Նշում 1*» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Նշում 1*

Ց Ա Ն Կ

ՊԱՐՏԱԴԻՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

NN ը/կ	Կազմակերպություններ և մասնագիտություններ	Թերապևտի ընտանեկան բժշկի զննում	Հետազոտություններ տուբերկուլոզի նկատմամբ	Մաշկավեներաբանի զննում	Հետազոտություն սիֆիլիսի նկատմամբ	Հետազոտություն աղիքային վարակիչ հիվանդությունների նկատմամբ (մանրէակրություն)	Հետազոտություններ հելմինթակրության նկատմամբ	Հետազոտություն վիրուսային հեպատիտ Բ-ի նկատմամբ	Հետազոտություն վիրուսային հեպատիտ Ց-ի նկատմամբ	Հետազոտություն քիթ-ըմպանի ախտածին ստաֆիլակոկի նկատմամբ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
3.	Մանկաբարձագինեկոլոգիական, 18 տարեկանից ցածր անձանց բժշկական օգնություն և սպասարկում, ստոմատոլոգիա-	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ՝ միայն միջա-	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ՝ միայն միջա-	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ՝ միայն	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ

	կան, վիրաբուժական, մաշկա-վեներաբանական, բժշկական օգնություն և սպասարկում (արտահիվանդանոցային և հիվանդանոցային) իրականաց-նող, հոգեբուժական կազմակերպություններ, շտապ բժշկական օգնություն և սպասար-կում իրականացնող կազմակեր-պությունների, ինֆեկցիոն, այդ թվում՝ հակատուբերկուլոզային հիվանդանոցների (բաժան-մունքների, կաբինետների), վերակենդանացման, հեմոդիալիզի բաժանմունքների, ախտորոշիչ լաբորատորիաների, մանրէազերծման բաժանմունքների, արյան հավաքագրման և փոխներարկման կետերի կամ բաժանմունքների, միջամտու-թյուններ իրականացնող կաբի-նետների բուժաշխատողներ				մտություններ իրականացնող կամ արյան և դրա բաղա-դրիչների հետ առնչվող բուժաշ-խատողները			մտություններ իրականացնող կամ արյան և դրա բաղադրիչների հետ առնչվող բուժաշ-խատողները	միջամտու-թյուններ իրակա-նացնող կամ արյան և դրա բաղադրիչների հետ առնչվող բուժաշխատող-ները	

».

5) հավելվածի N 1.19 ստուգաթերթի՝ «Ստուգաթերթը կազմվել է ներքոնշյալ նորմատիվ իրավական ակտի հիման վրա՝» գլխի վերնագիրը և ամբողջ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա

1. Առողջապահության նախարարի 2009 թվականի մարտի 27-ի N 03-Ն հրաման.

2. Կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշում:».

6) հավելվածի N 1.22 ստուգաթերթը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ